հայեր, մեծ մասամբ ռուսահպատակներ, որոնք ինքնակամ կերպով գրաւում են թիւրք բնակիչների տները՝ դուրս քշելով տեղական բնակիչ թիւրքերին։ Հայերին բնակեցնում են Հասան-Ղալայի շրջանում առանց շրջանային կոմիսարիատի գիտութեան՝ արգելք լինելով Օղնուտ—Երզնկայի շրջանից տեղահանուող ժողովրդի դաղթեցման ծրագրին։ Խնդրում եմ շուտով կարգադրել՝ դադարեցնել հայկական մանաւոր ընկերութիւնների կազմակերպուած այդ դաղթը՝ տալով ինձ այդ մասին ղեկավարող ցուցմունքներ»։

Խնդիրը ինքնին պարզ էր. արևմտահայ կազմակերպութիւնները, թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարութեան գիտութեամբ ու հաւանութեամբ և զինուորական ու քաղաքացիական իշխանութիւնների աջակցութեամբ կատարում էին դաղթականների տեղաւորում, որի ժամանակ, հնարաւոր է, որ բռնութիւններ էլ կատարուած լինեն Բասէնի շրջանում։ Բայց պէտք էր տեսնել, թէ ի՞նչ աղմուկ բարձրացրին մահմեդական շրջանները, ի՞նչ ծանր մեղադրանքներ ուղղեցին հայերի հասցէին։

Մայիս 23-ին Թիֆլիսի Բանւ. և Զինւ. Խորհուրդը Գանձակից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Գանձակ քաղաքում մահմեդականներն ու հայերը բաժանուել են երկու մասի. մէջտեղը կանգնած է զօրքը. Արջևանիձէ»։ Բնականաբար հասարակութեան ու կառավարական շրջաններում առաջ եկաւ սաստիկ իրարանցում։ Անմիջապէս հեռախօսով հարցում արուեց Գանձակ, և քաղաքագլուխ Խասմամեդովը զարմանքով պատասխանեց, թէ քաղաքում ոչինչ չի պատահել, հայերն ու թուրքերը ապրում են հաշտ, և զօրքը մնում է իր տեղը։ Ո՞ւմ էր հարկաւոր այդ չարամիտ խաղը. — մնաց չպարզուած։

Անհանդարտ, ջղագրգիռ վիճակ էր տիրում ամէն տեղ. մութ ձեռքը գործում էր անարգել և ոչ մի ճիգ, կառավարական կամ հասարակական ո՛չ մի ոյժ չկարողացաւ դսպել կամ առաջն առնել մահմեդական շարժումների։ Նրանք հետզհետէ ծաւալուեցին, ստացան յարատև բնոյթ և 1917թ. վերջերին արդէն դարձել էին կովկասեան կեանքի ամենաաղէտաւոր երեւոյթը։ Մահմեդական հոծ զանգուածներ ունեցող շրջաններում, յաճախ, կտրւում էր երկաթուղային հաղորդակցութիւնը, և պէտք էր լինում դիմել արտակարգ միջոցների՝ զինուորական ուժի ու զրահապատների օգնութեան, որպէսզի բացւի ճանապարհը։ Քրդական շարժումները նոր թափով բռնկուեցին 1918թ. յունուարի կէսերին, երբ ճակատի զանազան մասերում ուղղակի ճակատամարտներ մղուեցին քիւրդ հրոսախմբերի և կանոնաւոր զօրքերի միջև։ Միայն յունւ. 15—16-ին, և միայն Երզնկայի շրջանում, պաշտօնական հաղորդագրութեամբ, քիւրդերի ձեռքով սպանուեց շուրջ 200 մարդ։

Այս ամենը, ի հարկէ, անգնահատելի ծառայութիւն էր թիւրքերին։ Երբ Կովկասն արդէն բաւական խառնուել էր ներքին խնդիրներով, իսկ, միւս կողմից, թիւրք բանակն արդէն վերստացած էր նախկին ռազմունակութիւնը, թիւրք հրամանատարութիւնը դիմեց վճռական քայլերի. դեկտ. 16-ին կովկասեան բանակի հրամանատարը Վեհիբ փաշայից ստացաւ մի նամակ, որի մէջ ասւում էր, թէ սպարապետ Էնվէր փաշան նկատել է, որ գրաւուած վայրերում բռնութիւններ են գործադրւում թիւրքահպատակների վերաբերմամբ և պահանջում է վերջ տալ դրանց։ Մի քանի օր յետոյ, յունւ. 23-ին,